ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև միջուկային և ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումների դեմ պայքարի ոլորտում համատեղ գործողությունների ծրագրի» լրացման ստորագրման վերաբերյալ

2008թ. հուլիսի 14-ին Վաշինգտոնում ՀՀ արտաքին գործերի նախարարի և ԱՄՆ պետքարտուղարի կողմից ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև միջուկային և ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումների դեմ պայքարի ոլորտում համատեղ գործողությունների ծրագիրը», որը հիմք դրեց երկու երկրների միջև միջուկային և ռադիոակտիվ նյութերի անօրինական փոխադրումների դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և արձագանքման հարցերում ավելի սերտ համագործակցությանը և փորձի փոխանակմանը:

Ծրագրի շրջանակներում տեղի են ունեցել փորձագետների մակարդակով հայ-ամերիկյան միջգերատեսչական չորս հանդիպում, որոնց ընթացքում կողմերը քննարկել են կատարված աշխատանքները և ուրվագծել են առաջիկա անելիքները: 2016թ. հունիսի 13-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունում տեղի ունեցած հանդիպմանն ամերիկյան կողմը ներկայացրել է 2008թ. հուլիսի 14-ին Վաշինգտոնում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև միջուկային և ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումների դեմ պայքարի ոլորտում համատեղ գործողությունների ծրագրի» լրացման /այսուհետ՝ Լրացում/ նախագիծը: Լրացումը ուրվագծում է մեխանիզմ ԱՄՆ կառավարության կողմից միջուկային փորձաքննության տեղեկատվության փոխանակման և տեխնիկական միջուկային փորձաքննության դրույթների օժանդակության համար՝ նպատակ ունենալով աջակցել միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի մաքսանենգության հետաքննություններին:

Հաշվի առնելով այն արդյունավետ դերը, որ միջուկային փորձաքննությունը կարող է ունենալ միջուկային և այլ ռադիոակտիվ նյութերի շարունակական մաքսանենգության հետ առնչվող սպառնալիքների դեմ պայքարում, ինչպես նաև ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների դրական կարծիքը փաստաթղթի նախագծի վերաբերյալ՝ ՀՀ ԱԳՆ նպատակահարմար է համարում ստորագրել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև միջուկային և ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումների դեմ պայքարի ոլորտում համատեղ գործողությունների ծրագրի» Լրացումը:

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ՝

ԱՇՈՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ